

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱՋԻ ՎԵՐՁԻՆ ՆԱՄԱԿԸ

Այնթապ, 6 Յուլիս 1915

Սիրելիներս Հրանդյա և Զարուհի,

Սրտի անբացատրելի բերկրութեամբ, երէկ ստացայ ձեր հեռագիրը: Մօտ մէկուկէս ամիսէ ի վեր ձեզմէ բացարձակապէս լուր չունենալուս, այնքան զրգուրներ էր երեւակայութիւնս որ ինծի կը թուէր թէ ոչ միայն ես քայլ առ քայլ կ'երթամ դէպի գերեզման, այլ և դուք այդտեղ հիւանդ էք, նոյնպէս ամէնքդ ու կինս ու զաւակս ալ իրարմէ բաժնուած են, որ Սիրանը բոլորովին միմակ մնացած է, որ մայրս անդին շատոնց մեռած է արդէն, որ քոյրերս ամէն մէկը մէկէկէ մեծակ տուայտանքի մէջ է, և այլն, և այլն: Երէկուան ձեր հեռագիրը զիս բաւական հանդարտեցուց: Հրանդյա - Զարուհի զոյգ ստորագրութիւն, շատ գօտեպնդիչ ինծի համար. որովհետեւ կ'ուզեմ որ միասին ըլլաք, միասին աշխատիք, ներողամիտ ըլլաք իրարու և մանաւանդ ինծի: Տեսնեմք այս անիմանալի տառապանքներու բովէն եթէ ողջ դուրս գամ, ինչպէս իրարու կը փարինք դարձեալ:

Անշուշտ կ'անցնի այս փոթորիկնալ, բայց հարցը հոն է որ կարենայի դիմանալ ֆիզիքապէս. ես ինքզինքս աւելի առողջ և դիմացկուն կը կարծէի, բայց ահա քիչ մը ժամանակուան յոգնութիւն, տաք կերակուրի պակաս և անկողնի չզոյուլիս զիս վերածեցին թոյլ զանգուածի մը որ ոտքի կանգնելու կարողութիւն չունի: Գլուխս կը դառնայ շարունակ, ստամոքսս այլեւս ոչինչ, ոչինչ չի կրնար մարսել, մինչեւ անգամ մածոնը ետ կու գայ, աղիքներս կը ցաւին, հաւանաբար պառկած տեղս քար ըլլալէն, և ոտքերս ամբողջ վէրքերով լեցուած են:

Այստեղ համոզում գոյացուցին, որ անկարող եմ շարունակելու ճամբաս և ահա 6-7 օր է որ զիս վար դրած են՝ քիչ մը հանգստանալու համար: Բայց ինչպէս կարելի է հանգստանալ, և դեռ 8-10 օրուան ճամբայ ունիմ մինչեւ Մ. Ազիզ:

Ձեմ ալ գիտեր թէ ինչու զիս հոն կը դրկեն, քանի որ ոչ մէկ կապ չունիմ այդ քաղաքին հետ: 6 տարի առաջ, Սահմանադրութեան նոր հռչակուած օրերը իբրեւ Արեւելքի թղթակից հոն հանդիպեցայ քանի մը օր և իթթ. սպաներու հետ թեւ թեւի շրջեցանք, մէկ երկու բանախօսութիւն ըրինք: C'est tout.

Յուսամ ամէնքդ առողջ էք և հանգիստ. բոլոր քեռորդիներս և քոյրերս կը համբուրեմ. փեսաներուս ջերմ բարեւներ. Հրանդյա, համբոյր մըն ալ քեզի և համբոյր մըն ալ Սիրանիկիս, զոր կարօտեմ եմ ինչպէս կոյրը կը կարօտնայ լոյսը: Բարեւներ մայրիկին:

Ուրիշ ոչ մէկ կապ չունիմ ես խարբերդի հետ ու խելքս չի հասաւ թէ ինչու հոն կը տարուիմ: Երկու օրէն կը մեկնիմ:

ԲԱՐՍԵՂ

Հեռուն
Քնքուշ ծոցէն ալիքներուն
Խորին,
Վայրի երգեր կը ծորին,
Կու լան
Տառապանքը Բնութեան:

Անդին,
Ժայթքած կուրծքէն ամբողին
Խոժոռ
Հառաչանքներ ախտաւոր,
Կ'ողբան
Տաժանքները մարդկութեան:

(«ՍԻՍՈՒԱՆ» Թ. 1, էջ 48, Աղեքսանդրիա, 1905)

ԲԱՐՍԵՂ, ՇԱՀՊԱՋ

Հ Ր Ա Վ Ե Շ Տ¹

Իմ հայրենեաց սիրուն սոխակ
Երկնից երկրի քաղցրերգակ,
Ահ կը խնդրեմ թախանձագին՝
Որ գաս թառիս ինձ մօտ ծառին
Եւ անգամ մ'ալ քո երգերով՝
Լըքեալ հոգւոյս տաս մի կորով.
Ձի թռչնակդ իմ քաղցրաբընար՝
Ես պիտ' երթամ ի տար աշխարհ:

Իմ հայրենեաց վրճիտ աղբիւր
Քաղցր ջրէդ ցանեալ ի սփիւռ
Ահ կը խնդրեմ թախանձագին՝
Որ անգամ մ'ալ մէջ իմ սրտին
Մի քանի չիթ կաթեցնես՝
Որ ատուշան մ'է բոցակէզ.
Ձի ջինջ աղբիւրդ իմ զովարար
Ես պիտ' երթամ ի տար աշխարհ:

Իմ հայրենեաց զեփիւռ բուրբան
Կամ խնկաշունչ որդին զարնան,
Ոհ կը խնդրեմ թախանձագին՝
Որ յասիկին, է՛ անուշ վարդին
Բոյրն անգամ մ'ալ ածես առ յիս,
Եւ փարատես սուգըն սրտիս,
Ձի զեփիւռդ իմ եթերապար
Ես պիտ' երթամ ի տար աշխարհ:

24 Մարտ 1901

Իմ հայրենեաց գոյն գոյն ծաղկունք
Մատաղ կուսանց զեղ պըսակունք,
Ահ կը խնդրեմ թախանձագին՝
Որ եթէ զձեզ՝ իմ սիրելին
Շրթանցն հալէ լի ցանկութեամբ,
Փունջ մի համբոյր կորզէք անկէց
Որոյ պապակն զիս տոչորեց.
Ձի ծաղկունքդ իմ խընկապարար
Ես պիտ' երթամ ի տար աշխարհ:

Դ. ԶԵՊՈՒԳՅՈՒՆՅԱՆ

Ա Ռ Յ Օ Ղ Ի Կ Ն Ի Վ Ա Ր Դ Ի²

Դեռ կը ննջե՞ս զովիկ ցօղիկ՝
Այդ վարդենույդ ի քնքուշ գիրկ,
Տես պատեցաւ ցայգոյն սեւ քող,
Կը ճաճանչէ այգոյն վառ շող.
Սիրանուագ սոխակն աղուոր
Կը դայլայլէ ի հուռն օրօր
Յուշիկ սահի առուն խոխոջ:

12 Մայիս 1901

Օհ, արթնցիր դու եւս ցօղիկ
Ծաղկիդ գրկէն նուրբ և փափկիկ,
Ալ բաւ ննջես այսպէս մուշմուշ
Պահ մ'ալ սիրոյ համբոյրք անուշ
Քաղէ՛ կարմիր թերթիկներէն
Որք պատրաստ են քեզ տալ նորէն:

Դ. ԶԵՊՈՒԳՅՈՒՆՅԱՆ

(Դուրեան Ս. ի այցելութեան տարի՝ Մխիթարեանց վարժարանին ի Գաղկեղոն)³

«Բանաստեղծ չեմ, բայց բանաստեղծի նման կը սիրեմ ապրիլ՝ զգացմանց գաղափարից, խոկմանց, երեւակայութեանց և յիշատակներու վսեմագոյն աշխարհին մէջ, և ով որ բանաստեղծութիւնը կը սիրէ՝ նաեւ զայն ներշնչող գերագոյն էակը, սրտերու և հոգիներու քննիչը, բնութեան քնարերգակը, բանաստեղծն:

Այս սէրն է ահա, այս սէրն որ միտքս ու սիրտս կը յուզէ, երեւակայութիւնս կը վառէ, թերաւարժ գրչիս մղում մը կու տայ ընդհուպ՝ որ վայրիկ մը դեգերի այն բանաստեղծին անհունութեան մի փոքր մասին մէջ՝ որուն հանճարը գիտակցութիւն է տուած ամէն ազգային անհատներուն և այլոց՝ որ զինքը կոչեն՝ Գեր. ցութիւն է տուած ամէն ազգային անհատներուն և այլոց՝ որ զինքը կոչեն՝ Գեր.

Տ. Եղիշէ Ծ. Վ. Դուրեան»...

(28 Ապրիլ, 1901 «ԱՐՁԱՅԱՆԻ ՄՕՏԱՑԻ» Թերթէն)

Դ. ԶԵՊՈՒԳՅՈՒՆՅԱՆ

1. 2. 3. - Նախափորձեր զորս զրած է ողբ. ԳԱՆԻՒՆՆԻ ՎԱՐՈՒԺԱՆ ԻՐ ԱՇԿԵՐԱՌՈՒԹԵԱՆ շրջանին Քաղկեդոնի մեր վարժարանին մէջ՝ Մուրատ-Ուսիկեան գալէն առաջ. (Քաղուած «ԱՐՁԱՅԱՆԻ ՄՕՏԱՑԻ» խմբարարի Թերթէն, 1901, Թ. 6, 9, 10):